ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2023թ. թիվ 736-Ա

ՍԻԼՎԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով և հաշվի առնելով «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Սիլվա Մարգարյանի բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Սիլվա Մարգարյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Սիլվա Մարգարյանին՝

Հետագայում բացառել նմանատիպ խախտումները:

3. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

23/11/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. նոյեմբերի 23
ք.Վանաձոր